

ԱԵՐԻՆ ԱԳՈՒՀԻՄԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

Հայերէն ձեռագրերը

(Համառօտ նկարագրութիւն եւ յիշատակարաններ)

Շարունակութիւն \*)

8.

ՄԱՏԵԱՆ ԽՈՐՃՐԴՈՅ ՄՐԲՈՅ ՊԱՏՈՐԱԳԻ.

Թթվածք՝ 26 երկու.

26—27 սմ. × 18 սմ., կշկ. մզզ. բլգ. թւկ. Ո.ԶԾԴ (=1154  
1705), Օղուերձու գիւղ\*\*). գրիչ Եփրեմ քահանայ,

Սկզբից և վերջից երկերկու թերթ պարապ. — գրած 4 զոյն  
թանաքով (սե, կարմիր, երկնագոյն, ոսկեղոծ),

2ր. Խաչելութեան պատկեր.

3ա. Ոսկեղոծ, գեղանկար դրուագ.

16ա. Եպիսկոպոս պատարագչի պատկեր.

24ա Վերջ խորհրդոյ պատարագի,

— «Այլ աղաւթք որ ասի նախ քան զճաշակելն ի բանից  
թումայի առաքելոյն — Մարմին քոյ անապական լիցի ինձ ի  
կեանս...»:

Նամ. — Խորհրդատեսորիս խրատներում յիշատակութիւն չկայ  
սրբասացութեան մասին:

25ա. Յիշատակարան.

«Փառք պատիւ . . . .

ԱՌՊ՝ և հս աղայ Առւլթան ամուսին խօջայ հայրապետին  
նաև հս գուլի, ամուսին խօջայ նասիպին, և երկուքս միաբա-  
նութեան ստացանք զայս սը պատարագամատոյց գիրքս ի հալալ  
արգեանց մերոց, յիշատակ մեզ և ծնողաց, որդուց և զստերաց  
մերոց և ետունք ի դուռն սը Ստեփանոսի նախավկային որ է  
հովանի և պահապան գեղջիս մերոյ օղուերձու ի ձեռն քահանայից  
մերոց տէր գէորգին, տէր յովանէսին, տէր ալեքսանին, տէր նաւ-  
հապետին, տէր մարգարին, տէր զուկասին, զտէր մինասին, և  
զտէր եփրեմին, գծողի և ծաղկողի զրոյս, և որք յսպակայն գա-  
լոց են քահանայք, սբբանուէր պատարագիչք. — վասն որոյ աղա-

\*) Տես. Արարատ, 1914, դեկտ.

\*\*) Ստեփանոս նախավկայի վանքի մօտերը, պարսկական հողի վրայ:

չեմք զձեղ, զի ի ժամ՝ աղօթիցն զոր բազկատարած պատարագն մատուցանէք, յիշեսջիք զգուլիս և զաղա սուլթան աղախինքս ձեր զի մասն և բաժին լիցի մեղ ձերոց ս' պատարագացնու ամէն: Եւ ևս նուաստ եփրեմ անարժան քահանայ տեսի զփափագ բարեպաշտօն և երկիւղած և աստուածասէր կանանցն, աղա սուլթանին, և գուլուն, յանձն ասեալ զրեցի զայս մատեանս խորհրդոյ սրբոյ պատարագի, ի թոււականիս մեր հազար հարեր ՞՞ և ՞՞ (= 154, 1705) 'ի, յամսեանս յունիսի հի: (= 27) աւաբու եղեւ, ի հայրապետութեան ։ ան նահապեսի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, և եպիսկոպոսին մերոյ սուաթէի սուրբ առաքելոյ տեառն Յովասափի աստուածաբան վարդապետի և քաջ հսկորին եւ ևս յիշել աղաչեմ զձեղ զեփրեմ զծօղս, զի և դուք յիշեալ լիջիք ի գիրն կենաց. ամէնու Հայլ մեր որ յեր' . . .

## 9.

I. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. (Արմէսն վրդ. Զուղայեցւոյ).

II. ՏՐՈՄՈՒԱՆՈՒԹԻՒՆ. (հեղ. ?).

III. ՄԻ ՔԱՆԵՒ ԱՇԽԱԲՁԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. ՀԱՆԵԼՈՒԿԲ ՆԵՐՍՈՒԾԻ ՀԱՑՈՅ ԿԱԹՈՒՊԻԿՈՍԻ.

## Թթվ՝ 189.

16×12. կշկ. թղթ. նօտրոք, թւկ. զրչ. ? գրթ. տեղ. ?,

Բազկացած երեք մասից, իւրաքանչիւր մասի զրչութիւնն առանձին մարդու, ինչպէս և թուղթը տարրեր, հաւանօրէն 3 առանձին ձեռագրեր են ի մի կազմած:

Էջ 55բ. վերջ քերականական մասի, բայց կիսատ մնացած.

170բ. Վերջ տրամարանութեան.

189բ. Վերջ հանելուկների. կիսատ

Յիշատակարաններ չկան. միայն տրամարանութեան վերջում, (էջ 170բ.) զրուածքի շարունակութեամբ,

«Եւ արդ՝ աւարտ եղեւ տրամարանութեան, զի երեք զլուխքն, այսինքն՝ պարզառութիւնն, շարամանութիւնն, և շարաբանութիւնն յանգ ելին: Եւ զիտիլի է զի նախագաղափար տրամարանութեանս է յարիստոտէլէ, բայց ածանցի այլ և այլ շարագրութեամբ աւելորդութեամբ և պակասութեամբ վասն զիւրընկալութեան և պիտանաւորութեան, զի շարագրութիւն իմն անցեալ ի լեզուէ իմհքէ յայլ իմն լեզու, տարածայնութիւն ըստ շարագրութեանն երկի: Իսկ ըստ նոյն լեզուի շարագրեալն թէպէտ և դժուարք իցեն, անընտելք ոչ երեխն. վասն որոյ ըստ կարի մերում շարագրեցաք ըստ լեզուի մերում հայկազնեայց:

Փառք Քրիստոսի յուսոյն մերում հաւատացելոցո, որ տայ ճարտարութիւն ճշմարտաբան տրամաբանողաց»:

## 10.

**ՄԱՏԵԱՆ ՈՂՔԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՎԻՖՈՐԻ ՆՈՐԵԿԱՅ ՎԱՐՆԵ ԿԱՌԵ.**

**ԹԹՔ՝ 301. երկսին.**

Երկարութիւն՝ 20—21 ամ. լայն. 16 ամ., կաշեկազմ. մագաղ դաթ. բոլորագիր. թևկ. գրչ. Պեզ=866, 1417. Դրիմ. Գրիչ Քրիստոսուոր կրօնաւոր (արեղայ), գրչթ. տեղ՝ Քեմճակի Ս. Աստուածածնի վանք:

1—3ա. Յանկ բովանդակութեան. «Պատճէն ի ցուցանել գնշնւր ճառերսն վ՝ ս դիւրու գտանելոյ».

3բ.—«Բանք նշանաւորք (Գլ. ԺԲ, Իէ, Ի՛լ, Լ՛ի, Լ՛ի, Խ՛ը, ՀԵ, Հէ, Զ, ՂԲ, ՂԳ), որ ի գիրս յայս»: «Զնուաստ հողս զՔ ստուր կրաւնաւոր: Եւ ստացաւզն զմաղաքիա կրաւնաւոր յիշեսջիք աղաւթիւք առ Ք»:

4ա. Դրունք յոքնաթախանձ բանից աւգտակարաց . . . . . ի խնդրոյ հայցմանց Հարց միանձանց եւ բաղմաց անսալտատականց: Ասացեալ մատեան ողբերգութեան Դրիգորի նարեկայ վանից վանականի հոգիմատեան հոետորի և Հայոց փիլիսոփայի: ի խորոց սրտից խաւսք ընդ Ա.»:

4բ. պարագ. 2 թերթ պակաս. պակասում է առաջին զիսի սկիզբը՝ մինչև « . . . բուրեալ խունկ հաճոյական . . . » (5ա).

71ա. Ստորև կայ հետեւալ ծանօթութիւնը. «Զշեշտերն յաղագս եղանակի եղիք՝ որ ոտնաչափն ուղղորդ գայ եւ ի զոյնն՝ զի լալիք է» (Գլ. ԻԶ).

192ա. «ԱՌ սուրբք Ա.՝ որք աղաւթէք լուսաիդձ մատենի զողորմելիս եւ դանարժան Ք ստուր կրաւնաւորս և ստացաւդ ո՞ր. կտակիս Մաղաքիա կրօնորն յիշշ. ի Ք»:

214ա. Ստորև «բան իւթանասներորդ հինգերորդ»: նոյնակս էջ՝ 216ա ուժ:

237ա. Լուսանցքում նկարուած է մի հրեշտակ:

297ա. Վերջին (ՂԵ) գլուխն աւարտում է և ապա դալիս է. «Ա.արք սրբոյ Սոնն Ա.՝ Դրիգորի նարեկացւոյ»:

Աւղղագրթ.—Երե-ի փոխարէն երե, ինչպէս ամենահին ձեռագրերում:

299ր. Յիշատակարան գրչի. «Փառք, պատիւ...»

Ար ես կարողութիւն ապիկար ծառայիս և զաւրացոյց զմառունս բազկիս և հասոյց յաւարտ այսմ հոգէնուագ մատենիս Արդեզ զբաւ գրչութեանս ըստ հոլովման շրջագայութեան ամաց թվակի, ասգանապիհան աղինս արեթական տումարի երկեակ քառից հարիւրոց եւ տասանց վեցից և թուոց վեցից յաշխարհս հոնաց որ կոչի Նըիմ: Ի հայրապետութեան տեառն գրիգորի և մերոյ արքեպիսկոպոսին տէր կիւրեղին Զեռամբ թարմատար և փցուն գրչի Քսոտուր պիտականուն կրաւնաւորի: Ընդ հովանեաւ հոչակաւոր երկնահանգէտ և սուրբ ուխտիս որ կոչի Քեմճակի վանք, յանուն կինսակիս մօրն լուսոյ սուրբ աստուածածնին, և առ հանգստարան երջանիկ և սուրբ հօրն մերոյ խոչաչարչար խոաաձարակ մեծ ճպնաւորին Քրիստոսի և տիեզերալոյս աւետիք վարդապետին յոյժ վայելուչ զուարթատեսիլ և տրտմահալած լիառնային և դաշտային ծովահայեաց: Արդ այսմ հոգեպատում սուրբ կտակիս և աստուածարանեալ սուրբ մատենի, հոգէնորոգ և արտաւրածին, այսահալած և յուժիչ ցաւոց, լուսաւորիչ հոգւոց և փարատիչ խաւարային խորհրդոց, խորտակիչ ամբարտաւանութեանց և վարժիչ նուասուտախորհութեանց, ցանկացաւզ եղեալ սրբանեալ և կուսակրաւն քահանայն Մազարիա (մի յետին գրիչ ապրած ՌՃի-ին (1671) փոխել է Յոհան-ի) և ըստացաւ զատարդեանց իւրոց ի վայելումն անձին իւրոյ և հրահանգ և վարժիչ հոգւոց և մտաց և յիշատակ ծնուզաց իւրոյ (նոյն յետին գրիչը ջնջել և իր կողմից աւելացրել է. «Խօջայ փիրումին և մարիամին, և եղբարց իմոց Հախնազարին, Հայրապետին, Թէոդորոսին, Անդրէասին, Ստեփանոսին, Մկրտչին և ամենայն ընտանեաց իմոց:») Արք հանդիսպիք ամա կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄաղաքիա արեղայն զատացաւզ գրոցս, և զճնաւզմն իւր և զամենայն արհան մերձաւրուն: Եւ զիս զանպիտան զծողակս զբիստուր արեղայն և զիման ամենայն: Յիշեսջիք և զշնորհաւզ աւրինակիս, զսարդիս կրաւնաւոր սպասաւոր սուրբ հաշնին:.... (ջնջուած): Եւ զուք յիշեալ լիչիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւետեանս. ամէն:»

(Մինչոյն յետին գրչից).

«Եւ յորժամ ստացայ զատ, էր թուականն Հայոց ՌՃի.

299ր. «Արդ ես խօջայ փիրումս ստացայ զսուրբ զիրքս որ կոչի նարիկ ի հալալ արդեանց իմոց առ ի վայելումն որդոյն իմոյ տէր յոհանին, և յիշատակ ի զուռն թումայի սուրբ առաքելոյն: Մի ոք իշխասիչ հանել և կամ վաճառել զատ ի դրանէ սորին: Եւ որք յանդգնին, զբաժակն յուղայի արրցնա:»

Զեռագրի սկզբում մի երրորդ գրչից,

«յիշակ է նարեկս մեղրեցի յոհննէս վարպին (վարդապետին?) որ ես ի դուռն որ վանցն Թոյմայի Առքլյն օվ ոք որ ընթեռնու միոյ բերիւ ողորմի ասէ Եւ դուք յիշեալ լիչիք Առաջի Քւնի Այ մերոյ.... 44 յոլիս 10 8ին (իմա 18-ին) գրցւ»

Մ. Վարդ. Մաքուղեանց

Նարունակելի

## Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՐԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վերին-Ազուլեցի Մելքոն Փանեանցին)

36.

Թիֆլիս, 21 մարտի 1871.

Իմ աղնիւ և պատուական բարեկամ

Մելքոն Փանեանց,

Ահա անցանումեն երկու երկար ու ձիգ ամիսներ, որ ես ոչինչ լուր ստացած չեմ Զեղանից Զգիտեմ, ինչ է պատահած. արպիսի պատճառի բնծայեմ Զեր այսքան բազմաժամանակեայ լուսթիւնը՝ Ես զրեցի Զեզ իմ մերջին նամակը անցեալ յունուարի 20-ից յետու<sup>4)</sup>, մի քանի օր այն պատասխանական թղթից յետոյ, որ 19-ին արձակուեցաւ այս անդից առ սկ. Իիրեքտօր Նիկոլայ Դաւիդովիչ Դելեանովին:

Իմ առ Զեզ նամակի մէջ յայտնած եմ Զեզ պ. Դելեանովին ուղարկած պատասխանական նամակիս ոպարունակութիւնը, որ բոլորովին ստորագրական է, այսինքն համաձայն այն նամակագրութեանը, որ եղած էր յառաջուց պ. Քանանեանի և իմ մէջ, թէ ես պատրաստ եմ յանձն առնուել ինձ առաջարկած պաշտօնը ի վերայ հիման նորա յայտնած պայմաններին, ինդրելով միայն, որ Խնուրիտուարի մեծաւորքը մարդասիրութեամբ ուշագիր ինելով իմ չքաւորութեանը և հեռաւոր անզափոխութեանս ծանր ծախքերին, այլ և վերստին տնակարգութեանս պիտօքին Մոսկուայի մէջ, չսորհնեն ինձ փոքրինչ սժանդակ հնարք—600 մաս, —բայց մինչեւ այժմ ոչինչ կողմից պատասխան չըւնիմ: Զիս զարմացնում է մանաւանդ Զեր անօրի-

4) Անշուշտ, խօսքը 1874 թ. փետր, 2 նամակի մասին է, որ մենք դրել ենք № 55-ի տակ: Փանեանցի ստացած բոլոր նամակները ԱՌ-ի տակ են դրւած իրենց ստացման ժամանակի համաձայն: № 55 նամակին անմիջապէս հետեւում է այս նամակը, Յունարի 20-ից մինչեւ փետր. 2-ը դրւած ուրիշ նամակ չկայ: Յ. Տ. Յակ.